ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023Թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի 2022-23 ուստարվա II կիսամյակի քննաշրջանի քննարկում (զեկուցող՝ Վ. Աղաբաբյան) :
2. Ամբիոններում 2023-24 ուստարվա առարկայական փաթեթների առկայության մասին (զեկուցող՝ Վ. Աղաբաբյան) :
3. Ֆակուլտետի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջարկման և հաստատման մասին (զեկուցող՝ Վ. Աղաբաբյան) :

Նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար բ. գ.թ.դոցենտ Վ. Ա. Աղաբաբյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Վ. Աղաբաբյանը ներկայացրեց 2022- 2023 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփումը: Նա նշեց, որ լուծարքային շրջանը կազմակերպվել է ժամանակացույցին համապատասխան, խախտումներ և բացթողումներ չեն արձանագրվել: Զեկուցողը նշեց, որ II լուծարքային քննաշրջանի ավարտից հետո չկան ակադեմիական պարտք ունեցող ուսանողներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյանը, Ք. Մխիթարյանը, Ա. Չիբուխչյանը, Դ. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի վարիչ Հ. Ասատրյանը: Նա նշեց, որ ամբիոններում առարկայական փաթեթները հիմնականում առկա են: Ընթացքի մեջ են այն փաթեթները, որոնց ուսումնական պլաններում փոփոխություններ են տեղի ունեցել: Զեկուցողը նշեց առարկայական փաթեթների պարտադիր առկայությունը Moodle հարթակում, որի տեղադրման ժամկետները խիստ սահմանափակ են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Վ. Աղաբաբյանը , Մ. Ստեփանյանը, Ք. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-24 ուստարվա ամբիոններում առարկայական փաթեթների վիճակը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյան: Զեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը: Զեկուցողը նշեց, որ «Սպարտակ Սարգսյան» անվանական կրթաթոշակի համար ֆակուլտետն առաջադրել է «Դիզայն» կրթական ծրագրի IV կուրսի ուսանող Կամո Ջոնիկի Հովակիմյանի թեկնածությունը, ով ունի չորս կիսամյակ անընդմեջ գերազանցություն և մշտապես ցուցաբերել է հասարակական բարձր ակտիվություն: Զեկուցողը նշեց նաև, որ «Արտակ Ցուցուլյանի» անվանական կրթաթոշակի ֆակուլտետից ներկայացնելու է «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի IV կուրսի ուսանողուհի

Ալիսա Էդգարի Ոսկանյանը: Վերջինս վեց կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն և հասարակական բարձր ակտիվություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Մ. Ստեփանյանը, Հ. Ասատրյանը, Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը հաստատելու. Կամո Ջոնիկի Հովակիմյանին՝ «Սպարտակ Սարգսյան», Ալիսա Էդգարի Ոսկանյանին՝ «Արտակ Ցուցույան» անվանական կրթաթոշակի թեկնածուներ:

ՆԱԽԱԳԱՀՆԵՐ՝ Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ